ժէքը սովորականից շատ թանգ է գնահատւում և նրա գովասանութիւնն ու հռչակը տարածւում է ամբողջ գաւառի չորս կողմը։ Ջիարշաւի խաղերից յետոյ ամենքը ուրախ տպաւորութեան տակ ցրւում են իրենց տները։

Գ. Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԸ։ Ս. Գէորգի վանքը գտնւում է Հայից թրքացած Պտէղ (Պարտէզ) գիւղից դէպի հարաւային կողմը նայող լեռան ստորոտին։

Դ. Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔԸ։ Ս. Գեղարդի վանքը գտնւում է ս. Գէորգի հիւսիս-արևմտեան կողմը մի սարի գլխին, որին թրքացած Հայերը անուանում են Դամիւրով։ Թէ այս և թէ վերոյիշեալ վանքերն ու սրբավայրերը առհասարակ ուխտ են գնում, երկիւղածութեամբ և խորին պատկառանքով յարգում ու պատւում են թէ քրիստոնեայ և թէ թրքացած Հայերը։ Բայց եթէ մենք Հայերս ձեռնհաս թեմական Առաջնորդներ, շրջիկ քարոզիչ վարդապետներ և բանիմաց քահանաներ ունենայինք, այդ դժբախտ թրքացած բազմաթիւ Հայերը կրկին Հայ քրիստոնեայ դարձած կլինէին։

Ժ

ՈՒՏԻԱՑՈՑ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՀՆԱԻԱՆԴ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուտիացոց աշխարհի Թրքախօս և Ուտիա-